

հայ պատկերագրութեան համար ասոնք կարելոր են իբր ազդեցութեանց տարածման միջնորդներ:

Այս բազմակողմանի արժէքով ուսումնասիրութիւնը ունի նաեւ Զաւեւուած մը ուր Էջմիածնի մէկ ձեռագրէն առնելով Սրբազան հեղինակը մեզի կու տայ «Գանձ Ամենափրկչին ի Տէր Մանուէլ Բջնոյ», որուն կը յաջորդեն 10 ձեռագրաց յիշատարարանները, ուսումնասիրութեան ընթացքին արդէն մասնակի ներկայացուած:

Հատորը ուսումնասիրութեան համար մատչելի կ'ըլլայ իր անուանց եւն. ցանկով, անշուշտ բազմաշան Մեսրոպ Սրբազանի աշխատանքով պատրաստուած: Հուսկ կու գայ վրիպակներու ցանկ մը՝ իբր «անհրաժեշտ ուղղելիքներ»: Սակայն նոյնքան կարելոր շատ մը ուղղելիքներ անուղղայ մնացած են գործին մէջ. օրինակ, էջ 31, Ա. սիւնի վերէն 25-26 տողերուն Հայոց ԶԺԻ թուականը փակագծի մէջ հաւասար նկատուած է 1665ի՝ որ պէտք է ըլլայ 1465:

Իբր դիտողութիւն աւելցնեմ որ ցանկալի պիտի ըլլար բոլոր պատկերներուն տակ նշանակուած տեսնել անոնց շինութեան թուականը

կամ մօտաւոր շրջանը: Իսկ ամենասիրելի բարեկամ Գարեգին Սրբազանիս ներողամտութեան վստահելով իր ուշադրութեան կը յանձնեմ օտարաբանութիւնները՝ որոնք գոնէ իրեն նման հայ գիտնականի մը համար ուղղելը շատ հեշտ է: Ինչ հարկ տգեղ կոշտութեան երբ ունինք հեշտահոյուն մշակոյթը: Կամ ուսումնասիրութեան սկիզբն իսկ գործածուած՝ սխմիդիկ, դեկորատիւ, մօտիւններով, օտար խժաւոր բառերուն տեղ աւելի իմաստալից չէ՞ն՝ խորհրդատիպ, խորհրդանշան, զարդածեւ, ձեւաւորումներով: Էջ 41 բ. սիւնի սկիզբը յանկարծ կը հանդիպինք անճոռնի, անտիպ, օրնամենուացիայովի մը՝ որուն հայ լեզուէն վտարման առաջին հարուածը տուողը նոյն իսկ մեծանուն գիտնական բարեկամիս պիտի ըլլար:

Կ'աւարտեմ այս հակիրճ տողերը սրտանց յուսալով որ սրբազանին միւս թանկարժէք գործերն ալ հետզհետէ հրատարակուին: Նոյն տեսն մաղթելով որ գոնէ քանի մը օրինակ սպառի սա մեր յուսահատեցուցիչ անտարբերութեամբ ամչցնելիք մատենաւերներուն մէջ:

Յ. ՔՐԻՍԵԱՆ

Է Ա Յ Մ Ա Մ Ո Ւ Լ

Անցնող տարին խեղդեց մեր հոգեկան անխառն հրճուանքը որ պտուղն էր մայր հայրենիքի մէջ ուռճացող բեղուն ու բազմատեսակ զրական սեռերուն՝ գեղարուեստի շնորհալի թեւածումներու հետ զրական հունձք մը որ կ'ողողէր մեր մատենագրարանները, և աւելի՛ մեր սրտերը նոր և անվկանդ յոյսերով: Տխուր է ըսել, և սակայն պէտք է դարձեալ լսենք ու սպասենք որ կարմիր հորիզոնը պայծառանայ և Արարատի սպիտակափառ գագաթը վերստին երեւայ իր թափանցիկ շղարշին մէջ հինաւուրց յիշատակները նորոգելու, վերապրումի յոյսի աճեցնելու:

Մինչ այդ, կ'ունկնդրենք տխրանոյշ երգը հայրենաբաղձիկ, վտարանդի՝ հայ սրտերու, որոնք աշխարհիս չորս ծագերուն մէջ կ'ոգորին օտարութեան ու մոռացութեան դէմ, ու կ'արձանագրեն հայերէն և հայերու համար հայ գրի կեանքը, և իրենց ուխտն և երդումը այդ գրի կեանքին պահպանութեան համար, խորապէս համոզուած

թէ անոր մէջ է իրենց յատուկ և միակ արժանաւոր կեանքը:

Հայ մշակոյթի արտասահմանեան շարժումը կը ցուցադրէ գործեր որոնց մաս մը ճիգեր ու փորձեր են, ուրիշներ ալ կան և բաւականաթիւ որոնք իրապէս բան մ'ունին սորվեցնելիք մեր սերունդին և ունին կնիքը տեւական արժէքի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ տեսակէտով ազգային պատմական — մշակութային ուսումնասիրութիւններ իրենց յատուկ տեղն ունին 1936-1937ի շրջանին լոյս տեսած, մերիւններէն և հայ մշակոյթին սիրահար եւրոպացի ուսումնասէրներէ:

Նախ պէտք է ըսել թէ Խորհնացիներ պատմութեան զատով կը շարունակէ իր այժմէական նութիւնը և պահպանողականին դէմ կը ցցուի հակամարտ դպրոցը:

Այսպէս Հ. Վարդան Վ. Հացունիէ վերջ Ն. Արոնց է որ կը ծանրանայ թուականի հարցին